ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
№ՀԾԿՀ-25/7-ՄԱԾՁԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « » 2025թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետով՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, ով գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա(այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ավետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Լուծել կողմերի միջև 2025 թվականի փետրվարի 14-ին կնքված «Պետության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման» №ՀԾԿՀ-25/7-ՄԱԾՁԲ պայմանագիրը:
2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից և հանդիսանում է կողմերի միջև 2025 թվականի փետրվարի 14-ին կնքված №ՀԾԿՀ-25/7-ՄԱԾՁԲ պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից դադարում են վերոհիշյալ պայմանագրով կողմերի պարտավորությունները, բացառությամբ սույն համաձայնագրի 4-րդ կետով սահմանված պարտավորության:
4. Հանձնաժողովը պարտավորվում է 2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ մատուցված ծառայությունների դիմաց վճարել 2025 թվականի փետրվարի 14-ին կնքված №ՀԾԿՀ-25/7-ՄԱԾՁԲ պայմանագրով սահմանված ժամկետներում:
5. Սույն համաձայնագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները:

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով Ք. Երևան, Սարյան 22 ՀՀ 900011183010 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 02531594 Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան	«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ Ք. Երևան, Ն. Տիգրանյան 27 «Ինեկոբանկ» ՓԲԸ ՀՀ 2050022113371001 ՀՎՀՀ 00067177 Տնօրեն՝ Վ. Ավետյան
Digitally signed by SAFARYAN ARTUR 2401750053 Date: 2025.04.25 12:42:52 AMT	Digitally signed by SARKHOSHYAN NARINE 5414770387 Date: 2025-04-25 12:06:48
---------- (ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.